ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2017թ. սեպտեմբերի 11 **N 169-Ա**

ԱՊԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԾՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ 1990-1999 ԹԹ. ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԸ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 17-րդ հոդվածների պահանջներով Ապարանի զորակոչային տեղամասում 2017 թվականի ծմեռային զորակոչը կազմակերպված անցկացնելու նպատակով՝ ***կարգադրում եմ.***

1. Ապարանի տարածքային զինվորական կոմիսարին՝

1) 2017 թվականի սեպտեմբերից սկսել 1990-1999թթ. ծնված քաղաքացիների զորակոչի բժշկական հանձնաժողովի աշխատանքները և անցկացնել 1990-1999թթ. ծնված քաղաքացիների զորակոչը,

2) զորակոչել արական սեռի այն զորակոչիկներին, որոնց 18 տարին լրանում է մինչև 2017 թվականի ծմեռային զորակոչի վերջին օրը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիներին, որոնց նախկինում տրված տարկետման ժամկետները լրացել են:

2. Հաստատել՝

1) զորակոչային հանձնաժողովի կազմը համաձայն N 1 հավելվածի,

2) զորակոչիկների բժշկական ստուգումներն անցկացնող հանձնաժողովի կազմը համաձայն N 2 հավելվածի,

3) զորակոչիկների ընտանեկան, գույքային և նյութական ապրելակերպի պայմաններին ծանոթանալու համար ստեղծված հանձնաժողովի կազմը համաձայն N 3 հավելվածի,

ա. հանձնաժողովի կողմից կազմված ակտերը ներկայացնել Արագածոտնի մարզային զորակոչային հանձնաժողովի հաստատմանը:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝

1) ապահովել բժշկական հանձնաժողովի բոլոր անդամների պարտադիր ներկայությունը զորակոչային հանձնաժողովի աշխատանքներին,

2) բժշկական ստուգման և զորակոչի օրերին զորակոչային և բժշկական հանձնաժողովի անդամներին ազատել իրենց աշխատանքային պարտականություններից:

4. <<Ապարանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ գործադիր տնօրենին՝

1) կազմակերպված անցկացնել զորակոչի ենթակա բոլոր զորակոչիկների արյան խումբի և ռեզուս-ֆակտորի որոշումը, արյան, մեզի անալիզները և մնացած անհրաժեշտ հետազոտությունները,

2) ժամանակին կազմակերպել այն զորակոչիկների բուժումը, որոնք զորակոչային հանձնաժողովի կողմից ուղարկվել են բուժման,

3) հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ գույքով, հատուկ բժշկական սարքավորումներով, դեղորայքով,

4) զինկոմիսարիատի հայտով հատկացնել մեկ սանիտարական մեքենա՝ զորակոչիկներին Հանրապետական հավաքակայան տեղափոխելու համար:

5. <<Ծաղկահովիտի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի գործադիր տնօրենին՝

1) զորակոչի ընթացքում բժշկական հանձնաժողովին ապահովել սոնոգրաֆիկ հետազոտությամբ:

6. Ապարանի և Արագածի տարածաշրջանների համայնքների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին՝

1) օժանդակել զորակոչիկների ժամանակին ներկայանալուն զինկոմիսարիատ՝ համաձայն զինկոմիսարիատի ներկայացրած չվացուցակի և անհատական ծանուցագրերի:

7. Բոլոր համայնքների ղեկավարներին՝ զորակոչից առաջ զինկոմիսարիատի հետ միասին մանրամասն ճշտել զորակոչիկների տվյալները:

8. Հանձնարարել Ապարանի և Արագածի ոստիկանության բաժիններին՝

1) ապահովել հասարակական կարգի պահպանումը զորակոչի տեղամասում,

2) զինկոմիսարիատից ստացված տվյալների հիման վրա կազմակերպել այն անձանց որոնումները, որոնք խուսափում են ներկայանալ զորակոչային տեղամաս:

9. Սույն կարգադրության կատարման պատասխանատվությունը դնել Ապարանի զինվորական կոմիսար, գնդապետ Հ.Թանգամյանի վրա:

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2017թ. սեպտեմբերի 11-ի
N 169-Ա կարգադրության

Կ Ա Զ Մ Ը

Ապարանի տարածքային զինվորական կոմիսարիատի

ձմեռային զորակոչային հանձնաժողովի

Հ. ԹԱՆԳԱՄՅԱՆ	- Ապարանի տարածքային զինվորական կոմիսար, գնդապետ, հանձնաժողովի նախագահ
Գ. ԵՐԵՄՅԱՆ	- Ապարանի քաղաքապետի տեղակալ
Ռ.ՀԱԿՈԲՅԱՆ	- Ապարանի ոստիկանության բաժնի աշխատակից
Բ.ՎԱՐԴԱՆՅԱՆ	- Աշխատանքի և պատերազմի վետերանների խորհրդի նախագահ
Կ.ՄԿՐՏՉՅԱՆ	- Ավագ բժիշկ, վիրաբույժ
Ա.ՔՈՉԱՐՅԱՆ	- Հանձնաժողովի քարտուղար

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2017 թ. սեպտեմբերի 11- ի
N 169 -Ա կարգադրության

Կ Ա Զ Մ Ը

Ապարանի տարածքային զինվորական կոմիսարիատի

ձմեռային զորակոչային բժշկական հանձնաժողովի

Կ.ՄԿՐՏՉՅԱՆ - վիրաբույժ , ավագ բժիշկ

Բ.ՄԱՆՈՒԿՅԱՆ - թերապևտ

Լ.ՀԱԿՈԲՅԱՆ - հոգեբույժ

Ա.ՂԱՐԻԲՅԱՆ - նյարդաբան

Լ.ԱԹՈՅԱՆ - ակնաբույժ

Դ.ՂԱՄԲԱՐՅԱՆ - քիթ-կոկորդ

Կ.ՄԱՅԻԼՅԱՆ - սրտաբան

Մ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆ - մաշկավեներոլոգ

Գ.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - բուժքույր

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2017թ.սեպտեմբերի 11 - ի
N 169 -Ա կարգադրության

Կ Ա Զ Մ Ը

Զորակոչիկների ընտանեկան, գույքային և նյութական

ապրելակերպի պայմաններին ծանոթանալու, հանձնաժողովի

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ - Ապարանի զինվորական կոմիսարիատի զորակոչային բաժանմունքի կցագրման գծով տեսուչ

Ա. ՊԱՊԻԿՅԱՆ - Ապարանի զինվորական կոմիսարիատի ՆՊԶ-ի գծով տեսուչ

Ռ. ԲԱՐՍԵՂՅԱՆ - Հարթավան գյուղի հաշվառման տեսուչ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ